



ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՀՈՒՆԻՍԻՆ



ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
Տեղեկագրի ծածկագիրը՝ 1300-201

Տեղեկատվության բազմազանմամբ և տեղեկատվական հոսքերի ինտենսիվացմամբ բնութագրվող արդի աշխարհում էապես կարևորվում է «վիճակագրական եռանկյունու անկյունները զբաղեցնող», տարաբևեռ հակումներ ունեցող, պաշտոնական վիճակագրության երեք մասնակիցների՝ ռեսպոնդենտների, սպառողների և հարկատուների հնարավորին «մեկտեղումը» հատկապես՝ ազգային և միջազգային չափանիշներով պերցեպցիայի (կոմունիկացիոն ունակությունների համահարթեցման) պահանջների տեսանկյունով:

Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեն շնորհակալություն է հայտնում բոլոր ռեսպոնդենտներին (տեղեկատվություն տրամադրողներին), որոնց կողմից տրամադրված տեղեկատվության վրա է խարսխված սույն վիճակագրական հրապարակումը և ողջունում նրանց ու հարկատուների, որպես վիճակագրական տեղեկատվության սպառողների, արձագանքներն ու առաջարկները վերոհիշյալ նկատառումներով վիճակագրական հրապարակումների հետագա կատարելագործման համար:

Հրապարակումների հետագա կատարելագործման համար առաջարկությունները և մեկնաբանությունները խնդրում ենք ներկայացնել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի վիճակագրական տեղեկատվության տարածման բաժին:

0010, Երևան, Հանրապետության պողոտա, Կառավարական շենք, 3

Հեռախոս (+37411) 52-33-56

Ֆաքս (+37411) 52-19-21

Էլ. փոստ info@armstat.am

«Վիճակագրական կոմիտեի կայք»՝ <http://www.armstat.am>,

<http://armstatbank.am>,

<http://www.armdevinfo.am>

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Համառոտ մեկնաբանություն ՀՀ վիճակագրական կոմիտեի համակարգում սպառողական գների դիտարկման և ինդեքսների հաշվարկման մեթոդաբանության վերաբերյալ	4
ԱՂՅՈՒՍԱԿ 1 ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (յուրաքանչյուր ամսվա տոկոսային փոփոխությունը նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ)	5
ԱՂՅՈՒՍԱԿ 2 ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (նախորդ ամսվա նկատմամբ տոկոսային փոփոխությունը)	17
ԱՂՅՈՒՍԱԿ 3 ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (2018 դեկտեմբերը=100)	29
ԱՂՅՈՒՍԱԿ 4 ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (տարվա սկզբից հաշվարկված ժամանակահատվածը նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ (աճողական կարգով))	41
ԱՂՅՈՒՍԱԿ 5 ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՍՏ ԴԻՏԱՐԿՎՈՂ ՔԱՂԱՔՆԵՐԻ (նախորդ ամսվա նկատմամբ տոկոսային փոփոխությունը)	53
ԱՂՅՈՒՍԱԿ 6 ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՍՏ ԴԻՏԱՐԿՎՈՂ ՔԱՂԱՔՆԵՐԻ (2018 դեկտեմբերը=100)	66
ԱՂՅՈՒՍԱԿ 7 ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՍՏ ՍՊԱՌՄԱՆ ԱՊՐԱՆՔԱԽՄԲԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ	79
ԱՂՅՈՒՍԱԿ 8 ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (2015=100)	80
ՀԱՎԵԼՎԱԾ 1 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ (ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ) ԽՄԲԵՐԻ ԿԱԶՄՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌՆԵՐԸ 2017-2019ԹԹ.	82
ՀԱՎԵԼՎԱԾ 2 ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԴԻՏԱՐԿՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌՆԵՐՆ 2017-2019ԹԹ.	93

Համառոտ մեկնաբանություն ՀՀ վիճակագրական կոմիտեի համակարգում սպառողական գների դիտարկման և ինդեքսների հաշվարկման մեթոդաբանության վերաբերյալ

Հայաստանի Հանրապետությունում սպառողական գների ինդեքսի հաշվարկման համար Երևան քաղաքում և հանրապետության 10 մարզերում սահմանված մեթոդաբանությամբ կատարվում է սպառողական գների (սակագների) ամենամսյա դիտարկում:

ՀՀ ՍԳԻ-ի հաշվարկման համար գնադիտարկումներն իրականացվում են հետևյալ բնակավայրերում՝

Մարզի անվանումը

Շիրակ
Լոռի
Արմավիր
Արագածոտն
Տավուշ
Կոտայք
Վայոց ձոր
Գեղարքունիք
Սյունիք
Արարատ

դիտարկվող քաղաքները

Գյումրի
Վանաձոր
Վաղարշապատ
Աշտարակ
Իջևան
Հրազդան
Եղեգնաձոր
Գավառ
Կապան
Արտաշատ

Սպառողական գների ինդեքսի հաշվարկման համար, ՍԳԻ-ի զամբյուղում ներառված է՝ 450 ապրանք-ծառայություն (շուրջ 8000 ապրանք (ծառայություն)–ներկայացուցիչ):

Սահմանված է գների դիտարկման և ինդեքսների հաշվարկման հետևյալ կարգը.

- հետազոտվող քաղաքներում յուրաքանչյուր ապրանքատեսակի (ծառայության) համար գների (սակագների) դիտարկումը կատարվում է նախապես ընտրված 6-12 բազային առևտրի և ծառայությունների կազմակերպություններում,
- գնադիտարկման բազային օբյեկտները խմբավորված են 3 պայմանական խմբերի և յուրաքանչյուր խումբ բազային օբյեկտներում գնադիտարկումներն իրականացվում են տվյալ ամսվա ընթացքում մեկ անգամ (յուրաքանչյուր ամսվա 1-ին, 10-ին կամ 20-ին և դրանց մոտակա օրերին) բացառությամբ թարմ միրգ, բանջարեղեն, վառելիք (բենզին, դիզելային վառելիք) ապրանքատեսակների, որոնց գնադիտարկումը բոլոր բազային օբյեկտներում յուրաքանչյուր ամսում իրականացվում է 3 անգամ (1-ին, 10-ին և 20-ին և դրանց մոտակա օրերին),
- գների դիտարկման համար ապրանք (ծառայություն) - ներկայացուցիչների ընտրանքը կատարվում է, հաշվի առնելով սպառողական շուկայում դրանց հագեցվածության ու սպառման աստիճանը, արդիականությունը, ներկայացուցչական լինելը և այլն, նշելով դրանց տեխնիկական բնութագրերը, չափման միավորը և այլ անհրաժեշտ հատկանիշներ,
- գնային տեղեկատվական բազայի հիման վրա իրականացվում է սպառողական գների ամփոփ ինդեքսի հաշվարկ՝ ըստ մարզերի և հանրապետության, ըստ Անհատական սպառում՝ ըստ նպատակների դասակարգչի (ԱՍԸՆԴ) 12 հատվածների (2 նիշ դասակարգում), 44 խմբերի (3 նիշ դասակարգում), 94 դասերի (4 նիշ դասակարգում) և 190 ենթադասերի (5 նիշ դասակարգում),
- ՍԳԻ-ի հաշվարկը կատարվում է Լասպեյրեսի մոդիֆիկացված բանաձևով: